

2. «Անդրեասի» վերնագրված, բայց իրականում Հիպպոլիտոսին պատկանող «Liber generationis» աշխատության հայերեն թարգմանությունը (տասնմեկ էջ):

3. Պարսից Արեմենյան թագավորների, Եգիպտոսի Պաղոմյանների, հրեա իշխանների, հռոմեական-բյուզանդական կայսրերի մի ցուցակ՝ հիմնված Եվսեբիոս Կեսարացու աշխատությունների վրա (յոթ էջ):

4. Սասանյան թագավորների մի ցուցակ, ամենայն հավանականությամբ հայ հեղինակի գրչին պատկանող ինքնուրույն գործ:

5. «Եւսեբի ժամանակագրի» և «Եպիփանի» վերնագրերը կրող մի հատված, պարսից Արեմենյան թագավորների մի երկրորդ ցուցակ և առանձին, իրար հետ կապ չունեցող դեպքերի և առասպելների նկարագրություն, վերցված նմանապես Եվսեբիոս Կեսարացու գործերից:

6. Հռոմեական-բյուզանդական կայսրերի մի երկրորդ ցուցակ (քսաներկու էջ), վերնագրված՝ «Կայսերը Հռոմումոց թէ որչափ ամբ կալան կամ ամիսք և զինչ գործ գործեցան», նույնպես թարգմանական: Պետք է նշել, սակայն, որ հայ բանահավաքի ձեռքն այս վերջին բաժնում պարզ նկատելի է հակաքաղկեդոնական ոգով տոգորված հեղինակը մանրամասն կանգ է առնում ոչ միայն դավանաբանական վեճերի վրա, այլև որոշ շափով նաև ժամանակակից Հայոց պատմության, մի բան, որ բացարձակապես տեղ չի գտել «Ժամանակագրության» մյուս մասերում (բացառությամբ բնդամենը մի երկու նախադասությունների)⁴:

Այժմ համառոտակի անդրադառնանք այն աշխատանքին, որ կատարված է «Ժամանակագրության» ուսումնասիրության գծով:

Գրիգոր Խալաթյանցը 1903 թ. հրատարակեց նախորդ տարում Համբուրգում կայացած արևելագետների համագումարում կարդացած իր «Հիպպոլիտոսի ժամանակագրության հայերեն թարգմանության մասին»⁵ խորագրով զեկուցումը: Այդ աշխատության մեջ Գր. Խալաթյանցը բնության ենթարկելով ինդրո առարկա «Ժամանակագրության» «Անդրեասի» վերնագրված բաժինը գտավ, որ այն «բառացի նմանություն ունի Հիպպոլիտոսի «Գիրք ծննդոց»-ի (Liber generationis) հետ»⁶: Գր. Խալաթյանցը միաժամանակ ցույց տվեց, որ սկսած պարսից Արեմենյանների ցանկից «Ժամանակագրության» «Liber generationis»-ի հետ ունեցած նմանությունը զգալի կերպով նվազում է, այսինքն պարզ է դառնում, որ «Ժամանակագրությունը» կազմողի համար Հիպպոլիտոսի գործը զազարում է աղբյուր ծառայելուց և աղբյուր է դառնում մի այլ գործ, որը Եվսեբիոս Կեսարացու գրչին է պատկանում:

Գր. Խալաթյանցը փորձում է որոշել, թե ով է այս Անդրեասը, որ հանդես է գալիս որպես այս բաժնի հեղինակ և գտնում է, որ նա Մազնոս Եպիսկոպոսի եղբայր Անդրեասն է (IV դար), որ «հայտնապես Գ դարուն կիսուն Հիպպոլիտ-

⁴ Իհարկե, խոսքը չի վերաբերում Մովսես Խորենացուն պատկանող հատվածին և Սասանյան թագավորների ցուցակին:

⁵ G. Khalatiantz, Über die armenische Version der Weltchronik des Hippolytus, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, Bd. XVII, 1903, S. 182—186. Այս հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Հանդես Ամսօրեայ», 1904, Փետրվար, էջ 46—48, առանհայտ թարգմանությունը՝ Դ. Խալատյան, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, часть I, Москва, 1903, стр. 50—54.

⁶ Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 47:

յա ժամանակագրութեան բնագրին՝ բաղվածույր մ' ըրած է»⁷: «Այս քաղվածքը, — շարունակում է նա, — հայերենի է թարգմանել Անանիա Շիրակացին»⁸ և որ «այս դմեզ գրադեցնող գրութիւնս՝ (այսինքն ամբողջ «Ժամանակագրութիւնը — Հ. Բ.) Շիրակացվուն է, նույն իսկ գրութեան լեզուն և ոճը մատնացուց կրնեն»⁹:

Հայագետ Ֆինկը նույնպէս փորձեց ապացուցել, որ «Ժամանակագրութեան» մեջ հիշատակված Անդրեասը ոչ այլ որ է, քան Անդրեաս Բյուզանդացին, IV դարի տոմարագետը, Մագնոսի եղբայրը¹⁰:

Գր. Խալաբեկյանցի հետ միաժամանակ «Ժամանակագրութեան» վրա աշխատում էր նաև Վենետիկի մխիթարյան Բարսեղ Սարգսյանը, որը և հրատարակեց այն «Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ յէ զարու ի հնագոյն ժամանակագրաց» վերնագրով¹¹: Բ. Սարգսյանը իր ուսումնասիրութեան մեջ մանրամասն կանգ առավ «Ժամանակագրութեան» հետ կապված մի շարք աղբյուրագիտական հարցերի վրա և հանդեպ հետևյալ եզրակացութեան. «Ժամանակագրութիւնը» հինգէն վեց աղբյուրներէ բաղկացած է, այն է. 1. Մովսէս Խորենացի, 2. Հիպոլոդիտոս՝ Անդրեասի խմբագրութեամբ, 3. Եվսեբիոս, 4. Ափրիկանոս, 5. վեցերորդ դարի անպաշտոնական գրվածքներ»¹²:

Բ. Սարգսյանը, ի տարբերութիւն մյուս ուսումնասիրողների, վերոհիշյալ Անդրեասին համարում է հայ, որը հունարեն բնագրից հայերենի է թարգմանել Հիպոլոդիտոսի այս հատվածը, և հետագա ձեռագրերում սխալմամբ հիշատակվել է որպէս հեղինակ: Նա գրում է. «Գուցե՛ Տարոնի հռչակավոր սուրբ Ղազար վանքի գիտնական վանականն ու Ս. Սահակա աշակերտը, որ իբրև հոգևոր հայր Ս. Շուշանկան՝ ի միասին կերթար ի Վիրս, կրչար անոր վշտացը մխիթար, և մեռնելեն վերջ ալ կը գրեր իր և Ս. նունեի խաչի Պատմութիւնը, Քրիստոսի 475 թվականեն վերջ»¹³: Շարունակելով իր միաբը, նա ավելացնում է. «Հիպոլոդիտոսի թարգմանողն եղած է՝ հավանորեն՝ կամ Ե զարու մեր թարգմանիչներեն մին, այն է Անդրեաս Տարոնեցին, զոր ի վեր անդր հիշեցինք. և կամ, Անանիա Շիրակացին»¹⁴: «Ժամանակագրութեան» վերջում կցված կայսերաց երկրորդ ցուցակի մասին Բ. Սարգսյանը գրում է. «Մինչև Կոստանդիանոսի շրջանը օգտագործված են օտար (բյուզանդական) աղբյուրներ, իսկ Մեծն Կոստանդիանոսեն մինչև Կոստանդին Բողոնատոսի որդին Հուստիանոս (այսինքն է Հուստինիանոս Բ.) — որով վերջ կգրվի ժամանակագրութեանս — բյուզանդական կայսերաց վերաբերյալ մասը՝ երթալով ավելի ընդարձակված է կրոնական խնդիրներով: Շատ ջանացինք բյուզանդական սլաւոնաց և ժամանակագրաց կարգին մեջ որոնել գտնել հայ խմբագրութեան նաև այդ մասի աղբյուրները. բայց բաղդատութիւնները դրական արդյունք մը չափին մեզ և մենք շուղեցինք հեռավոր աղբյուրներով գոհ ըլլալ: Այսու հանդերձ՝ համոզված

7 Գ. Խալաբեկյանց, նշվ. աշխ., էջ 48.

8 Անդ.

9 Անդ.

10 F. N. Finck. Zur Personlichkeit des Chronisten Andreas. Zeitschrift für armenische Philologie, II Bd., I Heft, Marburg, 1903, S. 73—74.

11 Վենետիկ, 1904:

12 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԳ—ԺԴ:

13 Անդ, էջ Ը.

14 Անդ, էջ ԺԴ:

ենք, որ մինչև Փոքր Թեոդոս ավանդվածներն՝ ուղղակի կամ անուղղակի կերպով — այսինքն է՝ տոհմային երիցագույն հիշատակարաններու միջոցով — հունական աղբյուրներն քաղված ըլլան: Իսկ մնացածը — մասնավորապես եկեղ. պատմության վերաբերյալ տեղեկությունները — ըստ մեծի մասին անտարակույս Ձ և է դարու առաջին կիսում գրված ասորի և հայ այնպիսի հիշատակարանների հավաքված են, որոնք միաբնյայց կուսակցական ոգովուր տոգորված, կամակորված և պատմական ստուգութենի դուրկ են»¹⁵:

Բ. Սարգսյանը, շարունակելով իր աշխատանքը «Ժամանակագրության» վրա, հետազայում նրա աղբյուրների ցանկում ավելացրել է նաև Արծրունյաց Գրիգոր եպիսկոպոսի Երուսաղեմից Հայաստան գրած Թուղթը՝ Տեառնընդառաջի մասին¹⁶. «Ժամանակագրության» մեջ կա մի հատված այդ նամակից:

Բ. Սարգսյանը մանրամասն կանգ է առնում նաև այն կարևոր հարցի վրա՝ թե այդ բազմաթիվ ու բազմատեսակ աղբյուրները ով է ի մի հավաքել ու խմբագրել. նա գտնում է, որ այդ անձնավորությունը պետք է եղած լինի Անանիա Շիրակացին¹⁷: Նա իր միտքը հաստատելու համար բերում է մի շարք կրուվաններ, որոնց վրա մենք այժմ մեկ առ մեկ կանգ կառնենք.

1. Ստեփանոս Ասողիկը Շիրակացուն է վերագրում «Ժամանակագրությունը» նա ասում է. «Իսկ Անաստաս (կաթողիկոսը) խորհեալ Հայաստանեայց ըստ կարգել տօմար անշարժ, ըստ այլոց ազգաց, և հրամայէ Անանիայի Շիրակացու կարգել զՔրոնիկոն հրաշագան, յորում գտօմար մեր կարգեաց անշարժ»¹⁸:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանն ապացուցել է, որ Ստեփանոս Տարոնացին «Քրոնիկոնի» տակ նկատի է ունեցել ոչ թե «Ժամանակագրությունը», այլ Շիրակացու ՇԼԲ աղյուսակը¹⁹: Այդ մասին խոսք կլինի ստորև:

2. «Ինչպես տեսանք, — գրում է Բ. Սարգսյանը, — անանուն ժամանակագրությունը կավարտի ի թվ. Հայոց ՃԼԳ, այն է՝ յամի Տեառն 685: Իսկ որովհետև Սամ. Անեցիկն գիտենք, որ այդ թվականն վերջ իսկ դեռ կապրեր Անանիա՝ Հայոց մեծ գիտնականը. ուրեմն հետևությունն հայտնի է»²⁰, այսինքն, որ կարող էր Անանիա Շիրակացին լինել «Ժամանակագրության» խմբագիրը:

Այս փաստարկը ևս համոզեցուցիչ չէ: Մենք իրավունք չունենք Շիրակացուն վերագրել VII դարի որևէ երկասիրություն, ելնելով լուի նրանից, որ Շիրակացու կյանքի տարիներին է շարադրվել այն: Սամվել Անեցու տեղեկության վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Նա գրում է. «ԶԺԲ. Աշակերտքն Անանիայի՝ Հերմոն և Տրդատ և Աղարիա, Եզեկիէլ և Կիրակոս երթեալ յԵրուսաղէմ հաւանեցան երկարնակացն, և ի դարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա»²¹:

Սամվել Անեցին այդ դեպքը թվագրում է 712 թ., պետք է հետևենել ուստի, որ Անանիան (Շիրակացի՞ն) 712 թ. դեռ ողջ էր և լայն գործունեություն էր

15 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԲ:

16 «Սրբոյ հօրն Եւազրի Պոնտացոյ Վարք և մատենագրութիւնը», Վենետիկ, 1907, էջ ԺԺԲ.

17 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԳ:

18 Անգ. Ընդգծումները Բ. Սարգսյանինն են:

19 «Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը», էջ 143:

20 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԷ:

21 Սամուէլի քահանայի Անեցոյ, Հաւարմունք ի գրոց պատմադրաց, Վաղարշապատ, 1893, էջ 85:

ժամալուծ: Պրոֆ. Աշ. Արրահամյանը մանրամասն կանգ է առել Շիրակացու ծննդյան թվականի հարցի վրա և ցույց տվել, որ «Շիրակացին Տյուֆիկոսի մոտ է զնայել իր երիտասարդ հասակում, հավանական է 20 տարին լրացածուրեմն Շիրակացին ծնված պիտի լինի VI դարի վերջերում, և ամենաուշը — VII դարի սկզբներում»²²: Պրոֆ. Արրահամյանն այնուհետև գրում է. «661—667 թթ. (Անաստաս կաթողիկոսի ժամանակ—Հ. Բ.) Շիրակացին գտնվում էր տարիքավոր հասակում»²³: Գրեթե նույն եզրակացություններին է հանգել վերջերս ֆրանսիացի բյուզանդագետ Պ. Լըմերլը²⁴:

Արդ, եթե որևէ արժեք տանք Սամվել Անեցու ասածին, պետք է ընդունենք, որ տարիքավոր (այսինքն շուրջ 65—70 տարեկան) այդ մարդն ապրել է ևս մի 55 տարի և 120 տարեկան հասակում զբաղվել միարենակ-երկարենակ վեճերով: Դա հավանականությունից շատ հեռու է: Կամ Սամվել Անեցու նշած տարեթիվն է սխալ, կամ էլ այդ Անանիան՝ Անանիա Շիրակացին չէ, հետևաբար այդ փաստի վրա հենվելով հնարավոր չէ հանգել լուրջ եզրակացություններին²⁵:

3. «Ժամանակագրության ներքին փաստերն իսկ,— գրում է այնուհետև Բ. Սարգսյանը, որպիսիք են լեզվական նմանությունը, դանազան իրաց վերաբերյալ պատմական ակնարկություններ և ամբողջական կտորներ իսկ, որոնք սերտ առնչություն մը կհաստատեն մեծ Շիրակացվույն ճառական, տոմարական և պատմական մյուս գրվածքներուն հետ: Օրինակի աղաղակ, գլխավոր դարադուխները — Ադամեն մինչև ջրհեղեղ, և անտի մինչև Քրիստոսի ծնունդը — զորս կնշանակե այստեղ, նույնությամբ կգտնենք նաև իր Տոմարին մեջ: Այսպես նաև 72 ազգերու հիշատակությունն և ի մասնավորի 12 ազգերու անվանակոչությունը՝ որոնք դպրություն և գիր կգործածեն ի հնումն, նույն է երկու գրվածոց մեջ ևս: Յովսեպոսեն առնված մեկ տեղին, ուր կպատմվի հավուրս Պենտակոստեից Երուսաղեմի տաճարին մեջ կատարված մեծադորդ հրաշքն և բարբառը. «Գնամք աստի, զնամք» այլովք հանդերձ, մեջ բերված է՝ բառ առ բառ նույնպես Անանիա Շիրակացվո Յաղագս Յայտնութեան և Մենդեան հարադատ ճառին մեջ...»²⁶:

Վերահիշյալ նմանությունները (եթե այդպիսիք կան), բացատրվում են ոչ թե այն հանգամանքով, որ երկու գործն էլ նույն հեղինակի գրչին են պատկանում, այլ այն պարզ փաստով, որ երկուսն էլ կարող են օգտված լինել միևնույն աղբյուրից: Բայց իրականում այդպե՛ս է արդյոք: Կանգ առնենք վերահիշյալ շորս փաստերի վրա:

ա. Ադամից մինչև ջրհեղեղ և այնտեղից մինչև Քրիստոսի ծնունդը, որի մասին խոսվում է «Ժամանակագրության» մեջ, ըստ Բ. Սարգսյանի նույնությամբ գտնում ենք նաև Շիրակացու Տոմարի մեջ: Դա ճիշտ չէ և հակասում է փաստերին: Այսպես, Շիրակացին իր «Զատկի» ճառում, քննադատելով Իրոնի ժամանակագրությունն, ասում է. «Արդ մի՛ պատրեսցուք ճարտարութեամբ՝ արուեստին Իրոնի. զի երբէ ֆննեսցուք, ոչինչ ի նորայն զգանի նշմարիա. թողում ասել զընդ նդովիւքն լինել. այդ և ըստ արուեստին իսկ գործ ձևացումն ըստ

²² «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 38:

²³ Անդ, էջ 39:

²⁴ St'g P. Lemerle, Note sur les données historiques de l'autobiographie d'Anania de Shirak, Revue des Etudes Arméniennes, Nouvelle serie, t. 1, 1964, p. 201—202.

²⁵ Հմմտ. Աշ. Արրահամյան, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 39—40:

²⁶ Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրություն, էջ ԺԷ—ԺԸ:

մտահաճութեան իւրոյ և ոչ ըստ ճշմարտութեան. Բանգի ի ժամանակագրութեան իւրումն ՐՇ (5500) աւել ի ծննդեանն Փրկչին»²⁷: Այսինքն ըստ Իրոնի Աղամից մինչև Քրիստոսի ծնունդը անցել է 5500 տարի, որ Քրիստոսի առաջին տարին համապատասխանում է 5501 թ., մի բան, որի հետ Անանիա Շիրակացին ամենևին էլ համաձայն չէ, այդ թիվը համարում է խաբեություն, Իրոնի մտահղացումը: Շիրակացին քննադատում է Իրոնին նույն ճառի մի այլ տեղում էլ, ասելով. «Բայց մեզ քաւ և մի՛ լիցի հաւանել ժամանակագրութեանն Իրոնի շփոթելոյ և յաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց. և մի՛ ընդունել զթիւս տումարի նորա զխաբողականս. և լիցուք ընդ նդովիւք սուրբ հարցն»²⁸, կամ «Իրոն ոչ ճշմարտութեամբ խաւսեցաւ. և բանք նորա ոչ են հաւատարիմք»²⁹ կամ «Արդ ի մէջ երկուց վատթարաց պատեհագոյն զԵրմոզենի ասացեալսն համարին քան զԻրոնի. թէպէտ և ի ճշմարտութենէ երկոքեան վրիպեալք»³⁰:

Այժմ տեսնենք, թե ինչ է ասում այդ կապակցութեամբ «Ժամանակագրությունը»: «Ժամանակագրութեան» մեջ աշխարհի արարչագործութեան թվականը հիշատակվում է երեք անգամ: Առաջին անգամ այն բաժնում, որն ըստ ուսումնասիրողների Հիպոլիտոսի գործի թարգմանությունն է: Այնտեղ գրված է. «Եւ յԱղամայ մինչև ի գերութիւնն Բարեղացւոց՝ որ եղև յաւուրս Յեքոնիաջ ազգք հիսուն և մի, ամք ՏՊԽԲ (4842), ամիսք ինն: Եւ ի գերութենէն Բարեղացւոց մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ազգ շորեքտասան, ամք ՈԿ (660)»³¹: $4842 + 660 = 5502$: Փաստորեն մենք ունենք Իրոնի թվագրումը, որն ըստ Անանիա Շիրակացու սխալ է: «Ժամանակագրութեան» մեջ վերևում բերված փաստից երեք էջ հետո գրված է. «Միանգամայն յԱղամայ մինչև ի շարչարանսն Քրիստոսի՝ ամք ՏՇԼԳ (4534)»³²: Այնտեղ կա պարզապես գրչի սխալ. պիտի լինի ՐՇԼԳ (5534). գրիչը հազար տարվա սխալ է թույլ տվել: Որ դա պարզապես գրչական սխալ է հաստատվում է շարունակությունից. «և ի հնգեատասաներորդ ամէն Տիրերի կայսեր՝ մինչև ի հալածումն եկեղեցեաց, որ եղև յիննուտասաներորդ ամի Գիսկղեաթիանոսի, ամք ՄՂԶ (276): Ժողովին ամենայն աւորքն և լինին ամք ՐՊԺ (5810)»: 4534-ին գումարած 276 շպետք է տա 5810, այլ 4810: Քանի որ վերջին գումարը 5810 է, ապա 5810-ից հանած 276 մնում է 5534: Այսպիսով այս վերջին հաշվի համաձայն Աղամից մինչև Քրիստոսի խաչելությունը հաշվվում է 5534 տարի: «Ժամանակագրությունը» Քրիստոսին տալիս է ԼԲ (32) տարի կյանք: Հետևաբար, եթե 5534-ից հանենք այդ 32 տարին, ստանում ենք 5502, այսինքն նույն այն թիվը, ինչ նշված է վերևում, առաջին օրինակի մեջ:

Եթե Շիրակացին անկասկած իրեն պատկանող Զատիկի ճառում սուր քննադատության է ենթարկում Իրոնին՝ աշխարհի արարչագործութեան թվականի հարցում, ապա նա «Ժամանակագրութեան» մեջ (եթե, իհարկե, այդ երկի հեղինակը լիճեր), չէր կրկնի Իրոնի ասածը:

«Ժամանակագրութեան» վերջում կա հոսմեական-բյուզանդական կայսերաց մի երկրորդ ընդարձակ ցուցակ: Վերևում խոսք եղավ այն մասին, որ այս

27 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 297:

28 Անդ, էջ 296:

29 Անդ, էջ 298:

30 Անդ:

31 Անդ, էջ 369:

32 Անդ, էջ 372:

բաժնում տեղ են գտել ոմն հայ հեղինակի, ավելի ճիշտ բանաբաղի, որոշ ինքնուրույն նախադասություններ: Ահա այստեղ մենք հանդիպում ենք աշխարհի արարչագործության թվականի մի հիշատակություն ևս, որը միանգամայն տարբերվում է վերևում երկու անգամ մեջ բերվածից: Այնտեղ գրված է. «Լինին յԱդամայ մինչև ի ծնունդն Քրիստոսի ամբ ՐՄԿԴ (5264)»³³: Այդ առթիվ հայ հեղինակը տալիս է նաև բացատրություն. «Այս ի ստոյգ ժամանակագրական պատմութենէ ընդարինակեցաւ, իսկ ըստ այդոց՝ այսպէս ունի պատմութիւնք. ըստ Հրէից մինչև ի ծնունդն՝ ամբ շորս հազար. ըստ Շամրուացոց՝ շորս հազար. ըստ յունաց Եպիփանու Կիպրացոյ պատմութեանն հինգ հազար հինգ հարեւ. ըստ Քրոնիկոնի Բաղմավէյ պատմութեանն՝ հինգ հազար հարեւր իննսուն և ութ»³⁴: Անանիա Շիրակացին, որ մեր մատենագրության մեջ իրավամբ կոչված է «բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տոմարական արուեստից»³⁵, կարո՞ղ էր արդյոք գրել. «Այս ի ստոյգ ժամանակագրական պատմութենէ ընդարինակեցաւ»³⁶:

բ. «Ի մասնավորի, — շարունակում է Բ. Սարգսյանը, — 12 աղգերի անվանակոչությունը, որոնք դպրություն և դիր ունեին հնում, նույնն է Շիրակացու տոմարում և «Ժամանակագրության» մեջ:

Դա էլ չի համապատասխանում իրականությանը: «Ժամանակագրության» մեջ երեք անգամ խոսվում է դպրություն ունեցող ժողովուրդների մասին, բայց և ոչ մեկը չի տալիս 12 դումարը: Եթե նույնիսկ այդ երեք հիշատակությունների տվյալները իրար միացնենք, մենք կստանանք ոչ թե 12, այլ շատ ավելի ժողովուրդների անուններ: Բայց չէ որ Շիրակացու մոտ դպրություն ունեցող ժողովուրդները 12 չեն, այլ շատ ավելի: Շիրակացին այդ մասին խոսում է իր «Պատճեն տումարի հայոց» աշխատության սկզբում, որտեղ ասված է, թե դպրություն ունեն հետևյալ ժողովուրդները. երբայեցիները, քաղզեացիները, ասորիները, պարսիկները, մարերը, հնդկները, փյունիկեցիները, հույները, հայերը, փոյուզիացիները, հոռմայեցիները, եգիպտացիները, ասենացիները, բյութանացիները, կապադովկացիները, վրացիները և աղվանները³⁷, ընդամենը 17 ժողովուրդ:

«Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «Եւ այս աղգք են որ գիտեն ի սոցանէ դպրութիւն. ի բերացիք, դատինացիք՝ որով Հոռոմքն վարին, սպանիացիք, յոյնք, մարք, հայք», այսինքն ընդամենը վեց ժողովուրդ: «Ժամանակագրության» մի այլ տեղում կարդում ենք. «Եւ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն են

33 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 378:

34 Անդ, էջ 379:

35 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն հայոց, էջ 62:

36 «Ժամանակագրության» թվական տվյալները այլ տեղերում ևս հակասում են ստուգապես Շիրակացուն պատկանող երկերի տվյալներից: Օրինակ. «Ժամանակագրության» կայսերաց երկրորդ ցուցակում կարդում ենք հետևյալը. «Ի սորա (Վեսպասիանոսի) երկնուրդում ամի Տիտոս որդի նորին պաշարեաց զԵրուսաղէմ... և բրեաց ի հիմանց զքաղաքն... պատմէ և Յովսեպոս սոցաւ և սրով հարեւր քսան բերս կոտորեալ» («Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 380): Շիրակացին իր «Ջատիկ» ճառում այս դեպքի կապակցությամբ գրում է. «Եւ մկրտէին (աստրեալքն — Ն. Բ.) մինչև յամն երկուրդ Վեսպասիանոսի, Յուրում եղև հուսկ յետին անբումն տաճարին և պաշարումն և գերութիւն Երուսաղէմի» («Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 294), այսինքն Անանիա Շիրակացին Երուսաղէմի կործանումը դնում է Վեսպասիանոսի թագալորության երկրորդ տարում, երբ «Ժամանակագրության» մեջ այդ դեպքը թվագրվում է Վեսպասիանոսի յոթերորդ տարով: Նման փաստերը կարելի է բաղմապատկել:

37 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 112:

այսոցիկ. փյունիկեցիք, եգիպտացիք, պամփիլոցիք, փոխագացիք», այսինքն շորս ժողովուրդ: Եվ վերջապես մի այլ տեղում. «Երբայեցիք որ են հրեայք, պարսկք, մարք, քաղղեացիք, հնդիկք, ասորեստանեայք». վեց ժողովուրդ:

գ. Ըստ Բ. Սարգսյանի 72 աղգերի հիշատակությունը, որ հանդիպում է «Ժամանակագրության» մեջ կա նաև Շիրակացու տոմարում: Մեզ չհաջողվեց Շիրակացու, տոմարում գտնել այդ հիշատակությունը և եթե նույնիսկ կա Շիրակացու մեզ անծանոթ մնացած որևէ երկասիրության մեջ և համընկնում է «Ժամանակագրության» տվյալների հետ, ապա դա էլ փաստ չէ, որովհետև այդ տվյալին կարելի է հանդիպել բազմաթիվ ժամանակագրությունների մեջ, որոնք սկսվում են Ադամից:

դ. Երուսաղեմի մեծաղղորդ հրաշքի նկարագրությունը, — շարունակում է Բ. Սարգսյանը, — որ հանդիպում է նույնությամբ Շիրակացու Հայտնության և Զատիկի ճառում, կա նաև «Ժամանակագրության» մեջ, ինչպես նաև «գնամբ աստի, գնամբ» բարբառը:

«Ժամանակագրության» բանաբաղն ու Շիրակացին օգտվել են միևնույն աղբյուրից՝ Եվսեբիոս Կեսարացուց. նմանությունը այդտեղից է գալիս, և ոչ թե նրանից, որ երկու գործերն էլ մի մարդ է շարադրել: Համոզվելու համար այդ բանում բավական է մեջ բերել այդ հրաշքի նկարագրությունը վերոհիշյալ երկերից:

Եվսեբիոս Կեսարացի
(Մասն Բ, Քրոնիկոն
կանոն, էջ 266)

«Յովսեպոս պատմէ, թէ յաւուրս պենտակոստէից զղրդին և սօսափին նախ զքահանայիւրն պատէր, և ապա բարբառ յանկարծակի անտուտ ի ներքուտ ի տաճարէն լսելի լինէր զայս ձև օրինակի, թէ գնամբ աստի գնամբ»:

Շիրակացի
Հայտնության ճառ
(Ան. Շիր. Մատ., էջ 286)

«Յովսէպոսն պատմէ, եթէ յաւուրն Պենտակոստէիցն զղրդին և սարսափին նախ զքահանայիւրն պատէր, և ապա զբազմութեամբ ժողովելոցն, ապա և բարբառ յանկարծակի անդուտ ի ներքին տաճարէն լսելի լինէր զայս արինակ բանից, եթէ՝ Գնամբ աստի, գրնամբ»:

«Ժամանակագրություն»
(Ան. Շիր. Մատ., էջ 372)

«Յովսեպոս պատմէ, թէ Յաւուրն Պենտակոստէիցն եղև զղրդին և սաւափին: Նախ զքահանայապետիւրն պատէր, և ապա յանկարծակի բարբառ ի տաճարին՝ ի ներքուտ ի քաւարանէ անտի, որպէս ձև բանի ասելով. Գնամբ աստի, գրնամբ»:

Ինչպես տեսնում ենք Բ. Սարգսյանի այս փաստարկն էլ որևէ հիմք չի տալիս Շիրակացուն «Ժամանակագրության» խմբագիր համարելու համար:

4. «Ժամանակագրությունը» ընդօրինակված է մի ձեռագրում (Մաշտոցյան Մատենադարանի № 2679) Շիրակացուն պատկանող այլ աշխատությունների շարքում: Չնայած Բ. Սարգսյանը դա համարում է «զորավոր փաստ», սակայն զորություն չկա նաև նրա մեջ՝ քանի որ միջնադարյան ձեռագրերին չի կարելի մոտենալ որպես առանձին հեղինակների «երկերի» կամ «ընտիր երկերի» ժողովածուների: Նույն ձեռագրում կարող են իրար հաջորդել բոլորովին տարբեր հեղինակների երկասիրություններ³⁸:

³⁸ Նույն այդ № 2679 ձեռագրում կա նաև «Յաղագս ամսոց և նշանաց» աշխատությունը, որը նույնպես վերագրված էր Անանիա Շիրակացուն, բայց ինչպես ցույց ենք տվել արդեն հույն հեղինակ Աբառոս Սուլցուն է պատկանում: Տե՛ս «Բանբեր Մատենադարանի» № 7, 1964:

5. Մի գրչագրում հանդիպում է հայ պատմագիրների ցուցակ, որի մեջ հիշված է նաև Անանիա Շիրակացու անունը. «Անանիայ Շիրակացին. սկիզբն առեալ յԱղամայ, համառօտ գաւազանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անաստասայ կաթողիկոսի»: Սրա հիման վրա Բ. Սարգսյանը եզրակացնում է, որ ցուցակի հեղինակը ի նկատի է ունեցել խնդրո առարկա «ժամանակագրությունը»:

Ինչպես ցույց է տալիս ինքը Բ. Սարգսյանը, այս «ժամանակագրությունը» օգտագործել են հետազայում բազմաթիվ հեղինակներ, այն է Սերեոս, Մովսես Կաղանկատվացի, Ուխտանես, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ, Սամվել Անեցի, նաև Անանիա Սանահնեցի, Սարկավազ վարդապետ, Վարդան, Կիրակոս, Մխիթար Ապարանեցի և ուրիշներ: Բայց վերոհիշյալ հեղինակներից և ոչ մեկը չի ասում, որ «ժամանակագրությունը» նշանավոր Անանիա Շիրակացու գործն է: Դա ապացույց է այն բանի, որ այդ հեղինակներից և ոչ մեկի ձեռքում եղած օրինակը չէր կրում Շիրակացու անունը: Եվ եթե XVIII դարի մի գրչագրում հայ պատմագիրների շարքում հանդիպում է Անանիա Շիրակացու անունը, որն «սկիզբն առեալ յԱղամայ, համառօտ գաւազանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անաստասայ կաթողիկոսի», ապա այդ վկայությունը չի կարող իր ստուգության մասին կասկածներ շառաչացնել:

Ահա համառոտ գծերով «ժամանակագրությունը» Շիրակացուն վերագրելու Բ. Սարգսյանի առաջ քաշած կովանները: Բայց իրականության դեմ շեղանչելու համար պետք է ասենք, որ այնուամենայնիվ Բ. Սարգսյանը իր այդ եզրակացությունները որոշ չափով թեական է համարել: Նա ի միջի այլոց գրել է. «ժամանակագրության» խմբագիրը «ոչ միայն կրթոտ և անվայելուշ լեզու մը կը գործածե այն ժողովի (նկատի ունի Քաղկեդոնի ժողովը — Հ. Բ.) և դավանությանը նպաստող թագավորներուն և սրբակրոն հայրապետներու դեմ, այլ՝ որ դարմանալին է՝ մեծ Շիրակացվուն անհարմար և իրարու հակասող տգիտարանությամբ երբեմն պատմական ստույգ եղելություններն իսկ, ինչպես և անոնց գրավոր վարդապետության ուղիղ իմաստներն ևս կը խեղաթյուրե. և երբեմն երբեմն ալ... շինծու և ստահող առասպելները՝ որպես ճշմարիտ պատմություն՝ միամտորեն մեջ կը բերե կագուցանե: Արդ՝ դիտելով որ այս պարագաներս ճշգրիտ հակապատկերը կկազմեն Շիրակացվուն, դժվար է ուրեմն, որ միևնույն գրչի և մտքի ծնունդ ըլլան»³⁹: Բ. Սարգսյանը «ժամանակագրության» Շիրակացուն պատկանելու դեմ խոսող մի քանի այլ տվյալներ փորձում է բացատրել, բայց վերոհիշյալ փաստի համար նա բացատրություն չի գրանում և բավարարվում է, ասելով. «Ես իսկ կը խոստովանիմ, որ խիստ ծանրակշիռ է և դժվարալուծանելի»⁴⁰:

Բ. Սարգսյանից շուրջ քառասուն տարի անց «ժամանակագրությամբ» գրադվեց պրոֆ. Աշ. Աբրահամյանը: Նա ընդունեց «ժամանակագրության» Շիրակացու կողմից խմբագրվելու մասին Բ. Սարգսյանի բոլոր կովանները և առաջ անցնելով պնդեց, որ Շիրակացին ոչ թե խմբագրել է «ժամանակագրությունը» այլ հանդիսանում է նրա հեղինակը⁴¹:

39 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ Ի:

40 Անդ:

41 Իհարկե ճիշտ չէ պրոֆ. Աբրահամյանը, երբ ասում է, թե Բ. Սարգսյանը «ժամանակագրության» հեղինակ է համարել Շիրակացուն (էջ 142—143): Բ. Սարգսյանը Շիրակացուն պարզապես այդ գործի «վերջին խմբագիրն» է համարել:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանը Բ. Սարգսյանի կովանների վրա ավելացնում է հետևյալները. «Առաջին փաստը,— գրում է նա,— դա Շիրակացու դեպի իր օգտագործած սկզբնաղբյուրները քննադատական վերաբերմունք ցուցաբերելն է: Շիրակացին «ժամանակագրության» մեջ Ադամի մասին խոսելիս գրում է. «Եւրնդէ՛ր արդեւր զսա միայն որդոյդ անուամբ յորչորչեաց, իսկ վասն աչղոցն ամենեցուն պարզարար ասաց՝ թէ ծնան... Ինձ քով, հանգուցանելն՝ դադարեցուցանել, իսկ դադարեցուցանելն զամբարշտութիւնս և զշարիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց դարուն երկրորդի»⁴²:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանը եզրակացնում է. «Քննադատական այնպիսի դարձվածքներ, ինչպիսին են՝ «ես կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ, և այլն, հատուկ են ինչպես Խորենացուն, այնպես և Շիրակացուն»: Այսինքն «ժամանակագրության» մեջ հանդիպող վերոհիշյալ «ինձ թուի»-ն ըստ պրոֆ. Աբրահամյանի Շիրակացունն է և վկայում է նրա քննադատական վերաբերմունքի մասին դեպի աղբյուրները: Բայց այդ «ինձ թուի»-ն ամենևին էլ Շիրակացունը չէ: Դա Մովսես Խորենացունն է. «ժամանակագրության» այդ մասը հենց ձեռագրում, ինչպես վերևում ասվեց, վերնագրված է «Մովսիսի Խորենացույ» և եթէ պրոֆ. Աբրահամյանը այդ բաժինը համեմատեր Մովսես Խորենացու «Պատմության» համապատասխան հատվածի հետ կհամոզվեր, որ այդ «ինձ թուի»-ն պատկանում է Պատմահորը և միաժամանակ հնարավորություն կունենար սրբագրել բազմաթիվ էական սխալներ, որոնք մուտք են գործել «ժամանակագրության» մեջ գրիչների մեղքով: Այսպես.

Մովսես Խորենացի

(Ա. 4)

«Եւ րնդէ՛ր արդէօր զսա միայն որդոյ ա-
նուամբ յորչորչեաց, իսկ վասն աչղոցն ամե-
նեցուն պարզարար ասաց, թէ ծնան... Ինձ
քով՝ հանգուցանելն զադարեցուցանել է. իսկ
դադարեցուցանելն՝ զամբարշտութիւն և զշա-
րիս, սատակմամբ մարդկան զագրագործաց
դարուն երկրորդի»:

«ժամանակագրություն»

(Ան. Շիր. Մատենագր., էջ 358)

«Եւ րնդէ՛ր արդեւր զսա միայն որդոյ ա-
նուամբ յորչորչեաց, իսկ վասն աչղոցն ամե-
նեցուն պարզարար ասաց թէ ծնան... Ինձ
քով. հանգուցանելն՝ դադարեցուցանել. իսկ
դադարեցուցանելն զամբարշտութիւնս և զշա-
րիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց
դարուն երկրորդի»:

Վերահիշյալ զուգահեռը մի ուրիշ հարցի կապակցությամբ մատնացույց է արել շուրջ վեց տասնամյակ առաջ Բ. Սարգսյանը⁴³:

«Երկրորդ փաստը,— գրում է այնուհետև պրոֆ. Աշ. Աբրահամյանը,— այդ ժամանակագրության և Տիեզերագիտության տեքստերում հուլիս և օգոստոս ամիսների անունների առաջացման պատճառը նման լեզվով և ձևով նկարագրելու փաստն է: Ըստ այդ նկարագրության, հուլիս ամսի անունն առաջացել է Հուլիոս կայսեր անունից, իսկ օգոստոսը՝ Օգոստոս կայսեր անունից»⁴⁴: Եվ պրոֆ. Աշ. Աբրահամյանը զուգահեռ ձևով բերում է «ժամանակագրության» և «Տիեզերագիտության» այդ հատվածները ու եզրակացնում. «Ենչված փաստերի նմանությունն այնքան ակնբախ է, որ կոմենտարիաները, կարծում ենք, ավելորդ են: Այդ նմանությունները,— վերջացնում է պրոֆ. Աբրահամյանը,— գա-

⁴² «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 144:

⁴³ Բ. Սարգսյան, Խորենացու պատմագրութեան ուսումնասիրութեան ընթացքը և անոր հնութեան նոր ապացույցներ, «Բազմավէպ», 1903, էջ 514:

⁴⁴ «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 144:

իս են նորից ապացուցելու, որ «ժամանակագրության» հեղինակը Անանիա Շիրակացին է»⁴⁵:

Բայց վերոհիշյալ նմանությունը բացատրվում է ոչ թե նրանով, որ այդ երկու բնագրերն էլ պատկանում են Շիրակացու գրչին, այլ այն պարզ հանգամանքով, որ և՛ Շիրակացին իր «Տիեզերագիտության» մեջ, և՛ «ժամանակագրության» կազմողը օգտվել են Եվսեբիոս Կեսարացուց: Վերջինիս մոտ ի միջի այլոց մենք կարգում ենք. «Աւգոստոս Սերաստոս անուանեցաւ. և զսերաստոս ամիս՝ աւգոստոս անուանեաց»⁴⁶:

Ինչ վերաբերում է վերևում մատնացույց արված Բ. Սարգսյանի կասկածներին՝ «ժամանակագրությունը» Շիրակացուն պատկանելու հարցի շուրջը, ապա պրոֆ. Արրահամյանը փորձում է դրանք փարատել պնդելով, որ իբր Անանիա Շիրակացին մոլեռանդ հակաբաղկեղձոնական է եղել և իբրև ապացույց բերում է Սամվել Անեցու 712 թ. տակ հիշվող փաստը, որի մասին մանրամասն խոսք եղավ վերևում, փաստ, որի ստուգության վրա կասկածել է հենց ինքը պրոֆ. Աշ. Արրահամյանը⁴⁷:

«ժամանակագրության» վրա մի այլ հարցի կապակցությամբ կանգ է առել նաև Հ. Անասյանը: Նա նույնպես գտնում է, որ «ժամանակագրությունը» պատկանում է Անանիա Շիրակացու գրչին: Իր «Բուզանդարանի ուսերեն թարգմանությունը» ապակետիպ գրախոսականում Հ. Անասյանը գիմում է Անանիա Շիրակացու Զատիկի ճառին, որտեղ ի միջի այլոց ասված է հետևյալը. «Եւ արար Յեսու ի ԻԲ ար ամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ի շորեքտասան քսա աւուրցն յուանի. և առնէ նորոգումն կարգացն եղծելոց յանապատին. և առնէ իբրև ի նորոյ սկիզբն կարգաց և արինաց որպէս և Մովսէս յելաննին յնգիստոսէ. քանզի և զանցաննին զՅորդանան գետով ելս կոչէ յնգիստոսէ: Որպէս և ի ժամանակական կանոնի նախապատում հանդիսին մերոյ ճառեցար»⁴⁸:

«ժամանակական կանոնի» տակ քսա Հ. Անասյանի Շիրակացին նկատի է ունեցել խնդրո առարկա «ժամանակագրությունը»⁴⁹: «Իրոք, — ասում է նա, — այս ժամանակագրության մեջ խոսվում է Հորդանանի անցման մասին»⁵⁰:

Զատիկի ճառում Հեսուն, հրեաների Եգիպտոսից դուրս գալը և Հորդանան գետն անցնելը հիշվում են զատիկ օրը ճշտելու կապակցությամբ. այդ մասին է, որ Շիրակացու իսկ վկայությամբ խոսք է ասված նաև իր «ժամանակական կանոնի նախապատում հանդիսի» մեջ: Բայց «ժամանակագրության» մեջ նման բանի մենք չենք հանդիպում: Տվյալ բաժնում պարզապես հերթականությամբ արված է հրեա քահանայապետների պատմությունը, այդ թվում նաև Հեսուի Հորդանան գետն անցնելու պատմությունը: Բերենք երկու տվյալները կողք կողքի.

45 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 145:

46 Եւսեբի Պամփիլիայ Կեսարացույ ժամանակականք երկմաննայ, Մասն Բ, Քրոնիկոն կանոն, Վենետիկ, 1818, էջ 256:

47 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 40:

48 Հ. Անասյան, Բուզանդարանի ուսերեն թարգմանությունը, Երևան, 1954, էջ 8:

49 Անդ, էջ 9:

50 Անդ:

Անանիա Շիրակացի
(Զատկի ճառ)

«Ան արար Յեսու ի ԻՒ ար ամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ի շորեքտասան, ըստ աւուրցն լուանի. և անէ նորոգումն կարգացն եղծելոց յանապատին. և անէ իբրև ի նորոյ սկիզբն կարգաց և արինաց որպէս Մովսէս յելանելն յեզիպտոսէ. Բանգի և զանցանելն զՅորդանան զետով ելս կոչէ յեզիպտոսէ. որպէս և ի ժամանակական կանոնի նախապատում հանդիսին մերոյ ճառեցար»:

Ինչպես պարզ երևում է այս համեմատությունից, Անանիա Շիրակացին իր Զատկի ճառում ամենևին էլ չի ակնարկում «Ժամանակագրության» մեջ հիշված վերոհիշյալ փաստը:

Այնուհետև Հ. Անասյանը Զատկի ճառի «ի ժամանակական կանոնի նախապատում հանդիսին մերոյ» նախադասության՝ մեր կողմից ընդգծված բառերը հասկանալով «նախապես զրված ուսումնասիրություն», գտնում է, որ «Ժամանակագրությունը» զրված է եղել Զատկի ճառից առաջ, հետևաբար Զատկի ճառը նա թվագրում է 686 թվականից հետո ընկած ժամանակով:

Մեր կարծիքով Շիրակացու Զատկի ճառում հիշված «ժամանակական կանոնը» ամենայն հավանականությամբ նույնանուն է Ասողիկի հիշած «Քրոնիկոնի» հետ. «Թսկ Անաստասոյ խորհեալ Հայաստանեայցս կարգել տօմար անշարժ ըստ այլոց ազգաց. և հրամայէ Անանիայի Շիրակացոյ կարգել զՔրոնիկոն հրաշազան, յորում զտօմար մեր կարգեաց անշարժ»⁵¹: Եվսերիոս Կեսարացու աշխատությունը վերնագրված է «Եւսերի Պամփիղեայ Կեսարացոյ Քրոնիկոն կանոն որ և ժամանակական կանոն». այստեղից միանգամայն պարզ երևում է, որ Զատկի ճառի «ժամանակական կանոնը» և Ասողիկի մոտ հիշատակված «Քրոնիկոնը» միևնույն բաներն են: Արդ, ըստ Ասողիկի այդ «Քրոնիկոնը» այսինքն «ժամանակական կանոնը» բովանդակում էր հայոց անշարժ տոմարը: Խնդրո առարկա «Ժամանակագրության» մեջ մենք տոմարի մասին ընդհանրապես և հայոց տոմարի մասին մասնավորապես և ոչ մի հիշատակության չենք հանդիպում, պարզ է, որ Քրոնիկոնը (ժամանակական կանոնը) ոչ մի կապ չունի «Ժամանակագրության» հետ:

Եվսերիոս Կեսարացու «ժամանակական կանոնը» իրենից ներկայացնում է ժամանակագրական աղյուսակներ, որոնց զուգահեռ տրվում է առանձին դեպքերի նկարագրությունը: Մեր կարծիքով հիշտ է պրոֆ. Ա. Մ. Աբրահամյանը, որ Շիրակացու «Քրոնիկոնը» (այսինքն ժամանակական կանոնը) նույնացնում է Անանիայի ՇԼԹ աղյուսակի հետ: Այդ մասին վերևում մի այլ հարցի կապակցությամբ ասվել է: Եվսերիոս Կեսարացու «Քրոնիկոն կանոն» որ և ժամանակական կանոնը՝ ունի առաջաբան, որը վերնագրված է Πρωτολογον առաջաբան, նախաշավիղ, նախասացություն, որտեղ ցույց է տրվում, թե ինչ ձևով պետք է գտնել առանձին դեպքերի թվագրությունը և բերվում են առանձին օրինակներ: Ահա, վերոհիշյալ «նախապատում հանդիսի»-ի տակ մենք հասկանում ենք ոչ թե «նախապես շարադրված գործ», ինչպես բացատրում է Հ. Անասյանը, այլ «ժամանակական կանոնի» (Քրոնիկոնի) «նախաբան, ներածություն,

«Ժամանակագրություն»

«Յեսու որդի նաւեայ իբրև անց ընդ Յորդանան զեռ, եկաց յերկրին քանանացոց ամս քսան և եփն. և ի պատերազմունսն ամս վեց. յետ ժառանգեցուցանելոյ զերկիրն վիճակաւր եկաց ամս քսան և մի: Արդ անին, յորմէ հետէ եկն Աբրահամ յերկիրն քանանու մինչև ի մեռանել Յեսուայ որդոյ նաւեայ ազգք եփն ամք ՇԱ. և յկգամայ ազգք քսան և եփն, ամք ՎՊՁԳ»:

51 Ա ս ո ղ ի կ, էջ 99:

նախասացություն»— (Արժույթ), ինչպիսին ունի Եվսեբիոս Կեսարացու «Փամանակական կանոնը» և ինչպիսին, անկասկած, ունեցել է Անանիա Շիրակացու ՇԼԹ աղյուսակը:

* * *

Ինչպես տեսանք, բոլոր ուսումնասիրողների մոտ այն համոզմունքը կա, որ «Փամանակագրությունը» Անանիա Շիրակացու հեղինակությունն է և կամ էլ՝ ծայրահեղ դեպքում՝ խմբագրվել է Անանիա Շիրակացու կողմից: Վերոբերյալ մեր կոմպանները մեզ հանգեցրին հակառակ եզրակացության, որն առավել ևս ամրապնդվում է, երբ վերլուծության ենք ենթարկում հենց «Փամանակագրությունը», մի երկ, ուր իրար են կցված տարբեր աղբյուրների ու հեղինակների գործեր, առանց նույնիսկ նկատելու, որ տարբեր տեղերից բանաբաղված այդ տվյալները հաճախ իրար հակասում են: Բերենք փաստեր.

«Փամանակագրության» մեջ երեք անգամ հիշատակվում է Աղեքսանդր Մամյա կայսրը: Առաջին անգամ Հիպոլոլիտոսին վերագրվող բնագրում, երկրորդ անգամ հռոմեական կայսրերի առաջին ցուցակում, և երրորդ անգամ՝ կայսրերի երկրորդ ցուցակում: Արդ, առաջին դեպքում ասված է. «Եւ ի շարշարանացն Քրիստոսի մինչև յամեն երկուսասներուդ՝ քսաներորդ առաջնորդի թագաւորին հոռոմոց Աղեքսանդրի առնին ամք երկերիւր հինգ եւ ամիսք վեց», այսինքն ցույց է տրվում, որ նա թագավորել է առնվազն տասներկու տարի:

Կայսրերի առաջին ցուցակում գրված է. «Աղեքսանդր Մամէ՛ երիս» այսինքն, որ այս կայսրը թագավորել է ընդամենը երեք տարի:

Եվ վերջապես ըստ կայսրերի երկրորդ ցուցակի՝ «Աղեքսանդրոս Մամեայ որդի ամս շորեֆտասան»: Մեր համոզմամբ Անանիա Շիրակացու նման մի գիտնական նման բան գրել կամ խմբագրել չէր կարող: Կարո՞ղ էր, արդյոք, Շիրակացին մի տեղ գրել. «Վասն շարշարանացն տեսան մերոյ, որ եղև յիննուտասներուդ ամի Տիրերի կայսեր», իսկ մի քիչ հետո՝ «չուքուտասն ամի տերութեան սորա (Տիրերի) շարշարեցաւ Քրիստոս»: Կամ թե մի տեղ գրել՝ «Յեա Հերովդի՛ թագաւորէ Հրէից Արքեղաւոս որդի նորա ամս ինն: Յեա որոյ Հերովդէս՝ եղբայր Արքեղաւոսի՛ թագաւորեաց ամս քսան և ութ»⁵², իսկ ընդամենը մեկ էջ հետո. «Յեա Արքեղաւոսի թագաւորէ Ագրիպպաս աւագ՝ ամս վեց: Յեա սորա Ագրիպպաս մանուկ՝ ամս քսան և հինգ»⁵³:

«Փամանակագրության» բանաբաղը բյուզանդական Կոստանդ կայսեր դեմ ատելությամբ է լցված, հայհոյում է նրան, որովհետև նա «հնազանդեալ Արիոսի մոլորութեան» «հրաման եա դարձուցանել զԱրիոս յարտասահմանութենէ և ընդունել յեկեղեցի»: Իսկ ի՞նչ է ասում իսկապես Շիրակացին Կոստանդ կայսեր մասին. «Ասեն հաւանեալ (Կոստանդի) հերձուածոյն Արիոսի. քայց ոչ հակառակ նշմարուքեանն ինչ մաֆաւէր»⁵⁴:

«Փամանակագրության» մեջ հանդիպող հռոմեական-բյուզանդական կայսրերի երկու տարբեր ցուցակները իրենց տվյալներով հաճախ հակասում են միմյանց: Այդ հակասությունների մասին որոշ պատկերացում կազմելու համար

52. «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 371:

53. Անդ, էջ 372:

54. Անդ, էջ 285:

բավական է աչք ածել այդ երկու ցուցակներում կայսրերի թագավորության տարեթվերի վրա, կամ էլ կայսրերի թվի վրա:

Անանիա Շիրակացու նման մի գիտնական դժվար թե այսպիսի ապաշնորհ բանաբաղության հեղինակ լիներ: Ապաշնորհ լինելն երևում է ոչ միայն այն բանում, որ բանաբաղը չի նկատել իր կցկցած «Ժամանակագրության» մեջ առկա աղաղակող հակասությունները, այլև այն բանում, որ նա կատարել է թարգմանական այնպիսի սխալներ, որոնք Շիրակացու պես մի ականավոր հունագետ չէր կարող թույլ տալ:

«Ժամանակագրությունը» Անանիա Շիրակացու գրչին շագականելու մասին ունենք մի շարք, մեր կարծիքով բավականին ծանրակշիռ փաստեր և նկատառումներ ևս: Շիրակացին, որպես իր ժամանակի ամենատառաջավոր գիտնականներից մեկը, բնության երևույթներին մոտենում է միանգամայն գիտական տեսանկյունից: Նա ամենասուր բնագրատության է ենթարկում տարրեր հեղինակների աստղաբաշխական հակագիտական և անտիասպաշտական հայացքները, ծաղրի ենթարկում նրանց: Նա իր «Յաղագս շարժման թէ ուստի լինի» աշխատության մեջ փորձում է երկրաշարժին տալ իր ժամանակի համար գիտական բացատրություն⁵⁵: Բայց «Ժամանակագրության» բանաբաղը միանգամայն հեռու է գիտությունից, նա հավատացած է, որ այն բանի համար, որ հոսմայեցիք շքնդունեցին Զենոն կայսեր «Հենոտիկոնը» և հավատարիմ մնացին Քաղկեդոնի ժողովի որոշումներին՝ «եղև սաստիկ շարժումն ի Հոտվմ, մինչև նեխեցաւ երկիրն ի բազմութենէ դիակայցն»⁵⁶: Բնական երևույթների նման «բացատրություններ» «Ժամանակագրության» մեջ եղակի չեն:

Արդ, ո՞վ է «Ժամանակագրության» բանաբաղը և ո՞ւմ գրչին են պատկանում այս երկի վերջին բաժնի ինքնուրույն էջերը:

Մաշտոցյան Մատենադարանի № 5254 ձեռագրում (էջ 190ա—202բ) մենք հանդիպում ենք նույն այս «Ժամանակագրությանը» որոշ չափով համառոտված (հատկապես Հիպպոլիտոսին վերաբերող բաժինը, ինչպես նաև վերջին մասը, որտեղ մեծ մասամբ դավանաբանական վեճերն են շարադրված): «Ժամանակագրության» այս անտիպ բնագիրը, անկասկած, հրատարակված «Ժամանակագրության» բնագրից շատ ավելի բնաիր է:

№ 5254 ձեռագիրը ընդօրինակել է Գևորգ գրիչը 1280 թ.: Պրոֆ. Աշ. Արքաճամյանի կարծիքով «Ժամանակագրության» այս բնագիրն արտագրված է Մաշտոցյան Մատենադարանի № 2679 ձեռագրից (այս վերջինից են կատարված Բարսեղ Սարգսյանի և Աշոտ Արքաճամյանի հրատարակությունները): Իայց դա իրականությանը չի համապատասխանում: № 5254 ձեռագրի բնագիրը շատ ավելի բնաիր է և սկզբնական: Այս բնագիրը, համարելով № 2679 ձեռագրում եղած «Ժամանակագրության» սոսկ համառոտումը, պրոֆ. Աշ. Արքաճամյանն ընդգծում է, որ նրանց միջև եղած տարբերությունը «բնագրից (ուզում է ասել № 2679 ձեռագրից — Հ. Բ.) կատարված շեղումներ են միայն և ոչինչ չեն ավելացնում աեխտի վրա»⁵⁷: Բայց եթե այդ այդպես է, ապա ինչպե՞ս կարող է № 5254 ձեռագիրն ունենալ տեղ-տեղ «բնաիր ընթերցվածքներ»⁵⁸ ինչպես հայտարարում է պրոֆ. Արքաճամյանը: Զե՛ որ դա անհնարին բան է, այդ

⁵⁵ «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 321:

⁵⁶ Անդ, էջ 394:

⁵⁷ Անդ, էջ 357:

⁵⁸ Անդ, էջ 142:

հանգամանքը մի անգամ ևս ընդգծում է, որ № 5254 ձեռագիրը միանգամայն անկասկածաբար է № 2679 ձեռագրից:

Ահա № 5254 ձեռագրում ընդօրինակված «Ժամանակագրության» սկզբում կարդում ենք. «Խօսք Փիլոնի»: Հակառակ այն բանի, որ այստեղ ընդգրկող համառոտված է, կան հատվածներ, որոնք ընդարձակ բնագրում չեն հանդիպում, օրինակ՝ հայ Արշակունիների ցուցակը, որ գալիս է Սասանյան թագավորների ցուցակից անմիջապես հետո. այն վերնագրված է «Թագաւորք Արշակունիք, որ թագաւորեցին Հայաստան աշխարհիս» (էջ 199բ): Փիլոնի այս «Ժամանակագրությունը» այլ տեղերում ևս ավելի ճշգրիտ է, քան հրատարակվածը: Կայսերաց առաջին ցուցակն, օրինակ, ավարտվում է ոչ թե Հերակլով, այլ նրա որդի Կոստանդինով, որն ըստ Փիլոնի թագավորել է 28 տարի: Փիլոնի մոտ ավելի լրիվ է տրված նաև Սասանյան թագավորների ցուցակը. այն վերջանում է ոչ թե Խոսրով Փարվեզով (628 թ.), ինչպես № 2679 ձեռագրում առկա «Ժամանակագրության» մեջ է, այլ հասցնում է ցուցակը մինչև Սասանյան հարստության վերացումը:

Փիլոնի մոտ չկան № 2679 ձեռագրի «Ժամանակագրության» մեջ եղած և կուլյրաղիբի տպավորություն թողնող «Մովսիսի Խորենացույ»⁵⁹ «Եւսերի ժա-

59 Պրոֆ. Աշ. Աբրահամյանը գտնում է, որ «Ժամանակագրությունը» Խորենացուց վերցրել է մի հատված ևս և բերում է հետևյալ զուգահեռը. խոսքը հայ գրերի գյուտի մասին է.

«Ժամանակագրություն»

Մովսես Խորենացի

«Թէոդոս փոքր՝ որդի Արկաղեայ՝ ամս երեսուն և եւթն... Ի սորա ատուր էր Սուրբ Սահակ՝ Հայոց հայրապետ, յորոչ ատուրս զըսութիւն հայերէն լեզուի բսան և ինն գրով Ի Բանիէղէ փիղիսոփայէ Ասորւոյ կարգեցաւ. զոր ետ բերել Վոամշապուհ թագաւոր Վախրանայ նախարարի՝ ձեռամբ Հարէլի երիցու: Իսկ զեթն գրոցն պակասութիւն Մեսրոպր երանելի, Ի Հացեկաց Տարանոչ, յազատ տանէ, ամսաւրեայ պահաւք և աղաւթիք՝ հանդերձ աշակերտաւրն հայցեալ յԱստուծոչ, և ցուցաւ նմա Ի տեսեան Այս լինէր յԱսորոց աշխարհին՝ յորժամ վասն նորին անդ ճանապարհորդեցին: Իսկ զցուցեալ նշանախնցսն՝ հանդերձ միայարաւրն էր գրեալ... Ստեփանոսի («Հոստիանոսի») գրչի Սամոսացույ»:

«Վախճանեալ Արկաղեայ՝ փոխանակ նորա թագաւորէ նորին որդի, որ կոչեցան Թէոդոս փոքր... Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոչ լեզուիս, և հրամանաւ Վոամշապուհոյ և մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս...»: «Առաքեաց (թագաւորն Վոամշապուհ)՝ հաւատարիմ իւր, Խաղունի ազգաւ, Վահրիճ անուն, յոյժ փափազող նորին զործոչ, առ Հարէլն այն...» «Առ սա (առ Հոստիանոս) երթեալ Մեսրոպայ, և յայտն ևս անշահ մնացեալ՝ յաղօթս ապաւինի: Եւ տեսանէ... թաթ ձեռին աջոյ՝ գրելով Ի վերայ վիմի... Եւ յարուցեալ յաղօթիցն՝ Խոսեղձ զնշանագիրս մեր, հանդերձ Հոստիանոսի կերպածեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ»:

Այս կապակցությամբ պրոֆ. Աշ. Աբրահամյանը գրում է. «Շիրակացու (այսինքն «Ժամանակագրության» — Հ. Բ.) Խորենացուց օգտվելու փաստը, մեր կարծիքով, միանգամայն անկասկած է» («Ան. Շիր. Մատենագրությունը», էջ 146): Բայց դա պարզապես թյուրիմացություն է. գրանք իրար միանգամայն հակասող շարադրանքներ են: Խորենացին հայոց ամբողջ այրուքների հորինումը վերագրում է Մաշտոցին, այն ժամանակ, երբ «Ժամանակագրության» բանաբաղը այդ պատիվը վերագրում է Դանիել ասորուն, իսկ Մաշտոցին վերագրում է ընդամենը յոթ տառի գյուտը, տառեր, որ պակասում էին Դանիելի ստեղծած այրուքներից: Ստեփանոս Տարնացու մոտ պահպանված «Ժամանակագրության» վերոհիշյալ հատվածի վրա կանգ էր առել զեռևս Մ. Չամչյանը և ցույց տվել, որ դա է «Թարգմանեալ յասորոց», «աւանդութիւն ասորոց» (Հայոց Պատմութիւն, հատ. Ա, էջ 756, 757):

մանակագրի», և «Եպիփանու» վերնագրված հատվածները և դա ավելի կուռ է դարձնում Փիլոնի բնագիրը⁶⁰:

Փիլոնի համառոտողը ուրիշ աշխատանք էլ է կատարել: Նա կայսերաց երկու ցուցակների տվյալները տեղ-տեղ ձուլել է իրար. օրինակ՝ Թեոդոս Մեծի մասին երկու շարադրանքները:

Արդ, ո՞վ է այս Փիլոնը, որ հանդես է գալիս որպես «Ժամանակագրության» հեղինակ:

Հայ պատմագիրներից Ստեփանոս Տարոնացի Ասողիկը հիշատակում է Փիլոն Տիրակացուն: Նա գրում է. «Իսկ Անաստաս (կաթողիկոսը — Հ. Բ.) խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց և հրամայէ Անանիայի Շիրակացույ կարգել զՔրոնիկոնն հրաշազան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրոնիկոնն և վախճանի՝ կացեալ յաթոն ամս Զ: Ի սուրա ատուս էր և Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ պատմութիւնն քարգմանեաց ի հայ լեզու»⁶¹:

Այս Փիլոն Տիրակացին, մեր կարծիքով, հենց «Ժամանակագրության» բանաբաղն է. նա Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմությունը» թարգմանելուց հետո կազմել է նաև «Ժամանակագրությունը», օգտագործելով նաև հենց իր թարգմանած Սոկրատը: «Կայսերք հոռոմոց» բաժնում մի ամբողջական հատված բառացի վերցված է Սոկրատի Եկեղեցական պատմության համառոտ բնագրից. այսպես.

Փոքր Սոկրատ

(էջ 686—687)

«Յետ այսորիկ վախճանի երանելին Պրոկղ, և ունի զաթոս հայրապետութեան Փղարիանոս, և սկսաւ ուսուցանել ի դէմս նեստորի հայհոյութեանն. իսկ Եւտիբոս ոմն վանական ի Կուկղուշ, առադրէր ընդդէմ Փղարիանոսի մի բնութիւն ասելով զլուխս ութ. քանզի ոչ խոստովանի զքանն Աստուած առնուլ մարմին ի սրբոյ կուսէն և լինել մարդ, այլ ասէ. ոչինչ էառ ի կուսէն Մարիամայ, բայց միայն նմանութիւն մարդոյ և կերպարանօք զտեալ իրրև զմարդ, և ոչ ճշմարտութեամբ Աստուած մարդացեալ: Եւ ժողովեալ Փղարիանոսի զհոմախոհ եպիսկոպոսս իւր լուծանէ ի քահանայութենէ զԵւտիբէս: Եւ զիտացեալ զհակառակութիւն նոցա երանելույն Թեոդոսի թագաւորին, հրամայէ երկրորդ ժողով լինել յԵփեսոսս ի քսան և ինն ամի թագաւորութեան իւրոյ, և քննէ յազազս Փղարիանոսի Եւտիբոսի, և տեսանել զտոմարն

«Ժամանակագրություն»

(«Ան. Շիր. Մատ.», էջ 390—391)

«Յետ որոյ Փղարիանոս կալաւ զաթոս հայրապետութեանն. և սկսաւ ուսուցանել զնեստորի հայհոյութիւնն: Իսկ Եւտիբէս ոմն, վանական ի Կուկղուշ, առադրէր ընդդէմակս Փղարիանոսի զլուխս ութ, մի բնութիւն ասելով: Քանզի ոչ խոստովանի զԲանն Աստուած առնուլ մարմին ի սրբոյ կուսէն և լինել մարդ, այլ ասէ՝ Ոչինչ էառ ի կուսէն Մարիամայ, բայց միոչ խոստովանի զԲանն Աստուած առնուլ մարմին ի սուրբ կուսէն և այն նմանութիւն մարդոյ. և կերպարանաւք զտեալ իրրև զմարդ և ոչ ճշմարտութեամբ: Եւ ժողովեալ Փղարիանոսի զեպիսկոպոսս զհամախոհս՝ և լուծանէ զԵւտիբէս: Եւ զիտացեալ զհակառակութիւնս նոցա երանելին Թեոդոս, հրամայէ՝ կրկին անգամ ժողով լինել յԵփեսոսս, ի քսան և հինգ ամի թագաւորութեանն իւրոյ, և քննել յազազս Փղարիանոսի և Եւտիբոսի, և տես-

60 Փիլոնի բնագրի համառոտողը տեղ-տեղ ավելացրել է առանձին նախադասություններ, որոնք զուրկ չեն հետաքրքրությունից: Օրինակ, երբ խոսք է լինում զպրություն ունեցող ժողովուրդների մասին, ավելացնում է. «Իսկ վիրք և աղուանք ոչ կատարեալ զիր ունին այլ խելի ի հայոցն որպէս ասորին և իսմայելացին յերբանցոց առին» (էջ 192ա): Կան և այլ՝ ծավալով փոքր հավելումներ:

61 Ս տ ե փ ա ն ո ս Ա ս ո ղ ի կ, էջ 99:

Ասանի զտոմարն Ղևոնի, զտրեքտասան գր-
յութան գրեալս առ Փղարիանս՝ վասն նախ-
րոսի մոլորութեանն...
Յայնժամ երանելին Գիտակորոս՝ լուծանէր
ի պատուոյ զհաւանեալս նետորի, զՓղարիա-
նս եւ զպաղատանն եպիսկոպոս. ...լուծանէր
եւ զՔեոզորիտոս՝ Կիրոս քաղաքի եպիսկո-
պոս, ... եւ զԻոմնոս Անտիոքայ եպիսկոպոս
եւ փոխանակ նորա ձեռնադրի եպիսկոպոս Մար-
սիմոս ի ժողովին: Եւ եղև խաղաղութիւն յա-
տուրս Քեոզոսի թագաւորին բարեպաշտի»:

սանի զտոմարն Ղևոնի, զտրեքտասան գր-
յութան գրեալս առ Փղարիանս՝ վասն նախ-
րոսի մոլորութեանն...

Յայնժամ երանելին Գիտակորոս՝ լուծանէր
ի պատուոյ զհաւանեալս նետորի, զՓղարիա-
նս եւ զպաղատանն եպիսկոպոս. ...լուծանէր
եւ զՔեոզորիտոս՝ Կիրոս քաղաքի եպիսկո-
պոս, ... եւ զԻոմնոս Անտիոքայ եպիսկոպոս
եւ փոխանակ նորա ձեռնադրի եպիսկոպոս՝
ի ժողովին՝ զՄարսիմոս: Եւ եղև խաղաղու-
թիւն՝ յատուրս Քեոզոսի թագաւորի՝ եկեղե-
ցեաց՝ ամս յիսուն եւ երկու⁶²:

Մ. Տեր-Մովսիսյանը նրուազեմի մատենագրարանում գտնվող ձեռագրի
հիշատակարանի հիման վրա եկել է այն եզրակացութեան, որ Փիլոն Տիրակա-
ցին Սոկրատի «Եկեղեցական պատմութիւնը» թարգմանել է 696 թ.: Գուցե դա
հիշտ է Մեծ Սոկրատի կապակցութեամբ, որի բնագրի հենց սկզբում էլ հանդի-
պում է այդ հիշատակարանը: Բայց Փոքր Սոկրատը, ըստ երևույթին, թարգ-
մանվել է ավելի վաղ. այն ավարտվում է թարգմանչի հիշատակարանով, ուր
գրված է. «Արդ, զհրամանն ըս, քահանայդ Աստուծոյ, կատարեցի»⁶³: Պարզ է,
որ խոսքը հայոց կաթողիկոսի մասին է: Բայց ո՞վ է այդ կաթողիկոսը: Ստեփա-
նոս Տարոնացին ասում է, որ Փիլոն Տիրակացին Սոկրատի Եկեղեցական պատ-
մութիւնը թարգմանեց Անաստաս կաթողիկոսի օրոք (661—667 թթ.): Փոքր
Սոկրատի վերջում կա թարգմանչի հիշատակարանը, որտեղ ի միջի այլոց գրը-
ված է. «Բայց մեր աստանօր ուրեք զպատմութիւնս զաղարեցուցեալ, ով տէր
Ներսէս Կամսարական, ապոհիւպատ պատրիկ, որ եկեղեցեաց ես շինող...: Ձի
որոց ցանկացար պատմութեանս թարգմանել, ընդ նոյն Հանապարհ թագաւո-
րաց գնասցես»⁶⁴:

Ըստ Ասողիկի Ներսէս Կամսարականը իշխել է մինչև 691 թվականը. ճն
(140 + 551 = 691) թվականի տակ արդեն որպէս Հայոց իշխան հիշատակվում
է Սմբատ Բագրատունին⁶⁵, որը հաջորդել է Ներսէս Կամսարականին: Հետեա-
րար Փոքր Սոկրատը 696 թ. թարգմանվել չէր կարող. այն թարգմանվել է ավե-
լի վաղ, համենայն դեպս մինչև 686 թվականը, քանի որ այդ թվականով է ա-
վարտվում Փոքր Սոկրատից մի մեծ հատված ներբնկալած «Ժամանակագրու-
թիւնը»:

Պետք է խոստովանել, որ բացառված չէ, գուցե ավելի հավանական է մի
բոլորովին այլ բացատրություն: Փոքր Սոկրատի բնագրում վերոհիշյալ հատ-

⁶² Բնագրի նույնությունը առաջին անգամ մատնացույց է արել Ն. Աղսնյը (տե՛ս նրա
հոդվածը՝ «Փոքր Սոկրատի հեղինակը» Սիոն, 10 (1936) էջ 303): Աղսնյը Փոքր Սոկրատի հե-
ղինակ է համարում Հակոբ Սոհաջեցուն՝ XI դարի մի անձնավորություն: № 5254 ձեռագրում պահ-
պանված «Ժամանակագրութեան» վերնագիրը (եւստր Փիլոնի) և «Ժամանակագրութեան» մեջ
պահպանված խնդրո առաքիպ հատվածը, որ կա նաև Փոքր Սոկրատի մեջ, չեն հաստատում Աղսն-
յի ենթադրությունը, այլ ըստ երևույթին՝ Մ. Տեր-Մովսիսյանի, որի կարծիքով Փոքր Սոկրատի
համառոտողն էլ Փիլոն Տիրակացին էր:

⁶³ «Սոկրատայ Աբուլաստիկոսի եկեղեցական պատմութիւն», էջ 687:

⁶⁴ Անդ, էջ 689—690:

⁶⁵ Ա. Ո. Ղ. ի. կ. էջ 101: Մ. Տեր-Ղևոնյանը Ներսէս Կամսարականի իշխանությունը գնում
է 689—693 թվականների միջև: Տե՛ս նրա «Հայոց իշխանը» արարական տիրապետության ժա-
մանակաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1964, էջ 122, 130:

վածը կրճատված է. «Ժամանակագրության» մեջ այն հանդես է գալիս շատ ավելի ընդարձակ: Փոքր Սոկրատի այդ հատվածը հրատարակիչն առել է քառակուսի փակագծերի մեջ՝ ցույց տալով, որ Սոկրատի հունարեն բնագրից այն բացակայում է, ուստի ավելացված է թարգմանիչ Փիլոն Տիրակացու կողմից: Հնարավոր է, որ Փիլոն Տիրակացին «Ժամանակագրությունը» կազմած լինի նախքան Փոքր Սոկրատը թարգմանելը և թարգմանությունն ավարտելիս համառոտ կերպով մեջ բերած լինի «Ժամանակագրության» խնդրո առարկա հատվածը: Եթե դա այդպես է, ապա Փոքր Սոկրատի թարգմանության ժամանակն ընկնում է 686—691 թվականների միջև:

Փիլոն Տիրակացին չէր փայլում իր գիտելիքներով: Նրա գործերից մինչև օրս մեզ հայտնի էր միայն Սոկրատի «Եկեղեցական պատմություն» հայերեն թարգմանությունը: Այս երկի մանրակրկիտ ուսումնասիրությունը Մ. Տեր-Մովսիսյանին բերել է այն ճիշտ եզրակացության, որ Փիլոն Տիրակացին «սահմանափակ մեկն էր»⁶⁶: Տեր-Մովսիսյանը կանգ է առել այդ հարցի վրա և ցույց տվել, որ Սոկրատի եկեղեցական պատմության «թարգմանությունը ունի մեծ թերություններ. թարգմանը հայերեն լեզվից ունի բառերի հարուստ պաշար, բիշ բացառությամբ ուղիղ կերպով է հասկանում հունարեն բառերը, բայց շատ թույլ է քերականության մեջ և անտեղյակ երկու լեզուների ոճական նրբություններին: Նրա թարգմանությունը կարդալիս, այն տպավորությունն է ստացվում, որ կարծես շարունակ օգտվել է այնպիսի մի բառգրքով, որի մեջ յուրաքանչյուր հունարեն բառի հանդես նշանակված էր հայերեն բառի մեկ կամ երկու նշանակությունը առանց ոճերի. բնական է, որ այդ տեսակ թարգմանությունը բառացի, ստրկական է դուրս եկել: Նա առանց հասկանալու է թարգմանել հունարեն հայտնի և շատ գործածական ոճեր: Օրինակ «բոստ աշխարհին ասացուք» κατὰ γῶραν ἐροῦμεν⁶⁷ կամ «չտախից հատանել» — ἐκποδῶν ποιεῖν⁶⁸, կան դարձվածքներ, որ ուղղակի չի հասկացել. κορυδῆ γήπιον⁶⁹ հատուկ անվան տեղ է դնում «Ռուփի Նիկոմիդացու» Փ. Ս. «Ռուփին Նիկոմիդացի (էջ 15), κορυδῆ γήπιον = Կոմիդիենաւ (էջ 58), οὗτος κορυδῆ νέος ὢν⁷⁰ = Սա Կոմիդացի⁷¹ գրլով (էջ 355): Թարգմանիչը երբեմն հատուկ անունները հասարակ կարծելով թարգմանել է՝ օրինակ. Ἡλιούπολις Արեգ քաղաք, նույն Փ. Ս. (էջ 52) Τερέβινθος սխալմամբ Ἐρέβινθος է կարդում և թարգմանում Սիսեռն (էջ 70)...: Մի թեթև ակնարկ ձգելով հատուկ անվանց ցանկի վրա, կարելի է տեսնել, թե ինչքան անհասկացած և քմահաճոյական ձևեր են ստացել հունարեն անունները հայերենի մեջ...»⁷²:

Մենք Տեր-Մովսիսյանի մատնացույց արած Փիլոն Տիրակացու սխալների մի փոքր մասը միայն մեջ բերեցինք, բայց այդքանն էլ բավական է Տիրակացու գիտելիքների սահմանափակության մասին զազափար կազմելու համար:

Երբ անդրադառնում ենք «Ժամանակագրությանը», ապա համոզվում ենք,

66 «Սոկրատայ Արդաստիկոսի եկեղեցական պատմություն», էջ 29:

67 ճիշտ թարգմանությունն է՝ «իր տեղում կասենք»:

68 Նշանակում է «հեռացնել, դեմ շարժել»:

69 Նշանակում է՝ «շատ փոքր, մանուկ»:

70 Նշանակում է՝ «նա շատ մանուկ լինելով»:

71 Մ. Տեր-Մովսիսյանը սխալ է բառանշատումը կատարել. նա գրում է «Սակս մի-նադացի» (էջ 26): Պիտի լինի՝ «Սա Կոմիդացի»:

72 «Սոկրատայ Արդաստիկոսի եկեղեցական պատմություն», էջ 29—30:

որ վերոհիշյալ կարգի թարգմանական սխալներ կան նաև այնտեղ: Մենք համեմատեցինք միայն Հիպպոդիտոսի բաժինը՝ մեզ հասած հունարեն առանձին հատվածների հետ: Այնտեղ եղած թարգմանական սխալները չէր կարող կատարել Շիրակացին, որ, ինչպես մեկ անգամ առիթ ունեցանք ասելու, տասնամյակներ էր ապրել հույների մեջ և փայլուն կերպով գիտեր հունարեն լեզուն, հունարեն լեզվի նրբությունները: Մեր ասածը համոզեցուցիչ դարձնելու համար ավելորդ չէ այնտեղ կանգ առնել «ժամանակագրության» թարգմանական մի քանի սխալների վրա, որոնք իրենց բնույթով, ինչպես ասացինք, հար և նման են Փիլոն Տիրակացու Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» թարգմանության մեջ թույլ տված սխալներին:

Հունարեն բնագրում կարդում ենք. «ἕως Μαστουσίας τῆς κατ' ἄξιον αἰσχίνης «մինչև Առևելքում գտնվող Մաստուսիան», «ժամանակագրության» մեջ այն թարգմանված է. «Մինչև ի Մաստուսիա, որ է Իդիովն»։ հունարեն ἄξιος բառը, որ տվյալ դեպքում նշանակում է «Առևելք» բնորոշված է որպես հատուկ անուն:

Հունարեն բնագիրն ունի. ἀπὸ Μεδίας ἕως τοῦ ἑσπερίου, այն է «Մարաստանից մինչև Արևմուտք», հայերեն թարգմանությունն ունի. «Ի Մարաց մինչև ի Սպերիոն», այսինքն նախապես հիշատակված թարգմանական սխալի հար և նմանը: ἑσπερίου բառը հալ թարգմանիչը ընդունել է որպես հատուկ անուն:

Հունարեն բնագիրն ունի. «ἕισι δὲ αὐτοῖς καὶ νῆσοι ἐπικουνοὶ αὐταί. Κόρσυρα...», այսինքն՝ «Երանց հասարակաց կղզիները հեռեկայինքն են. Կորսյուրա...» և այլն: Հայերեն թարգմանությունն ունի. «Եւ այս են կղզիք նոցա. Եպիկունիա, Իդակորսուդա...», այսինքն հունարեն ἐπικουνοὶ հասարակ գոյականը հաջորդ αὐταί դերանվան ասաջին ա-ի հետ միասին ἐπικουνοὶս ձևով վերցվել է որպես հատուկ անուն և դարձել կղզու անուն. αὐταί դերանվան մնացած — ստա տառերը կցվել են Κόρσυρα կղզու անվան և դրանով ասացվել է «Իդակորսուդա»՝ գոյություն չունեցող կղզու անուն: Հիպպոդիտոսի լատիներեն թարգմանության տեքստում կարդում ենք. Amisos libera. պարզ է, որ հունարենում այն պետք է հանդիս դար Աμισός ἐλευθέρα ձևով, այսինքն «Ամիսոս ազատ»: Հայերեն թարգմանությունն ունի. «Ամիսոս, Եղևթերա». պարզ է, որ հունարեն ἐλευθέρα ածականը վերցվել է որպես հատուկ անուն և դարձել քաղաքի անվանում:

Հունարեն բնագրի «Σπαγών τῶν καὶ Τυρινίων, καλούμενων δὲ Ταρρακοννησιῶν...», այսինքն «Սպանիացիների, որ և Տյուրինացիներ, որոնք Տարրակոնեցիներ են կոչվում» հայերենում թարգմանվել է. «Ազգը Սպանիացուց որ են Տյուրինացիք Պէտարակոնեացիք...»: Միտքը ամբողջությամբ խեղաթյուրված է, բացի դրանից հունարեն δὲ շաղկապը հալ թարգմանիչը կցելով «Տարրակոնեացիներին» դարձրել է «Պէտարակոնեացիք»:

Հունարեն բնագրի Σαρίνοσς-ը հայերեն թարգմանության մեջ «Կեսարանացիք» ձևով է: Ամենայն հավանականությամբ հայերենի առաջին Կե-ն, դա հունարեն «καί» շաղկապն է (արտասանվում է՝ «կե») որ թարգմանիչը կցել է Σαρίνοσς տեղանվան:

Նման բնույթի թարգմանական սխալների օրինակները կարելի է բազմապատկել, բայց վերոբերյալներն էլ բավական են համոզվելու, որ Անանիա Շիրակացին այդպիսի սխալներ կատարել չէր կարող, իսկ Փիլոն Տիրակացու հա-

մար, Սոկրատի թարգմանությունից դատելով, այդ կարգի սխալները բնական են:

Այսպիսով, վերը շարադրված փաստերը մեզ բերում են այն համոզման, որ հրատարակիչների կողմից «Ժամանակագրություն» կոչված VII դարի բնագիրը ամենևին էլ Անանիա Շիրակացու երկասիրությունը չէ: Նրա հիմնական մասերը հունարենից կատարված թարգմանություններ են. շնչին մասը միայն կարելի է համարել հայ հեղինակի ինքնուրույն աշխատանքի արդյունք: Եվ այդ ամբողջ աշխատության ամենահավանական բանաբաղ-թարգմանիչն ու ինքնուրույն էջերի հեղինակը՝ Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է:

P. M. БАРТИКЯН

К ВОПРОСУ О «ХРОНОГРАФИИ», ПРИПИСЫВАЕМОЙ АНАНИИ ШИРАКАЦИ, И О ЕЕ КОМПИЛЯТОРЕ

Р е з ю м е

В начале XX века Б. Саркисяном была издана анонимная «Хронография», датированная 685/686 гг. Издатель, а вслед за ним ряд арменоведов данное произведение приписывали Анании Ширакаци. Однако содержание «Хронографии», которая представляет собой в основном компиляцию из трудов греческих авторов (в первую очередь Ипполита Римского, Евсевия Кесарийского и других), противоречит данным произведений, действительно принадлежащих перу Анании Ширакаци. На основании фактов автор статьи доказывает, что Анания Ширакаци не мог быть компилятором (об авторстве его не может быть и речи) «Хронографии».

«Хронография» была издана на основании текста, сохранившегося в рукописи Матенадарана имени Маштоца за № 2679, датированной 981 годом. В Матенадаране, в рукописи № 5254, датированной 1280 годом, сохранился текст той же «Хронографии» в более сокращенном виде. Хотя эта последняя рукопись на три столетия моложе рукописи № 2679, «Хронография» в ней представляется в более первоначальном и неискаженном виде. В заглавии «Хронографии» рукописи № 5254 указывается, что составителем ее является Филон, которого автор данной статьи отождествляет с Филоном Тиракаци, переведшим к концу VII века с греческого языка на армянский «Церковную историю» Сократа Схоластика.

H. M. BARTIKIAN

A PROPOS DE LA „CHRONOGRAPHIE“ ATTRIBUEE A ANANIA CHIRAKATSI ET DE SON VERITABLE COMPILATEUR

B. Sarkissian publiait, au début du XX^e siècle, une „Chronographie“ anonyme datant de 685/686 qu'il attribuait, comme le firent, par la

suite, nombre d'arméniologues, à Anania Chirakatsi. Cette „Chronographie“ qui ne présente qu'une compilation d'ouvrages d'auteurs grecs (Hippolyte de Rome et Eusèbe de Césarée, en premier lieu, et d'autres) est en contradiction avec les ouvrages authentiques d'Anania Chirakatsi. Il nous est montré, à l'appui de nombreuses preuves, qu'Anania Chirakatsi, loin d'être l'auteur de la „Chronographie“, n'en est pas plus le compilateur.

La „Chronographie“ fut publiée sur la base d'un texte (Erévan, Maténadaran, no. 2679) datant de 981. Elle nous est parvenue également dans un manuscrit (Maténadaran, no. 5254) datant de 1280, sous une forme plus abrégée et plus proche de l'original que le texte du manuscrit 2679, de trois siècles plus vieux.

Le titre de la „Chronographie“ du manuscrit 5254 indique le nom de son auteur, Philon, que l'auteur du présent article identifie avec Philon Tirakatsi, traducteur arménien, à la fin du VII^e siècle, de l'original grec de „l'Histoire ecclésiastique“ de Socrate le Scolastique.

